ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 5-24-76

N 155
14 սեպտեմբեր 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան.

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ղեկավարի 138-147 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Աշոտ Աշուղյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գուգարք համայնք, հասցե գյ. Գուգարք, փող.6, շ.47,

Հեռախոս՝ 5-24-76
Էլ.Փոստ՝ gugarq.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2018 թվականի N 138-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆՆԱ ՍԱՔԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Աննա Սաքանյանի 2018 թվականի օգոստոսի 27-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Գուգարք համայնքի փող. 2, շենք _____ հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Աննա Սաքանյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2018թվականի 1-ին կիսամյակի համար՝ 01.01.2018-31.07.2018:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ _____ Ա.Աշուղյան

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

30 08 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ No 139

06-031-0012-0052 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետով, 53-րդ հոդվածի 3 կետով, 60-րդ հոդվածով, 64 հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12.04.2001թ. թիվ 286 որոշման «Է» կետով; ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 714-Ն որոշման «Է» կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 Ն որոշմամբ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ «Քաղաքացիական» օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 510 Ն օրենքով, հիմք ընդունելով 24.03.1995թ. կազմված սեփականության վկայագիրը, ըստ որի բնակելի տունը (քոթեջը) պատկանում է Նվեր Հովիկի Առաքելյանին, իսկ բնակելի տան (քոթեջի) զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 06-031-0012-0052 կադաստրային ծածկագրից բնակավայրերի նպատակային նշանակության 0.0084հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը համապատասխանում է ՀՀ «Հողային» օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ ՀՀ «Հողային» օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, այն, որ սեփականաշնորհված բնակարանը իրենից ներկայացնում է երկրաշարժից տուժած համայնքում քաղաքացիներին օրենքով սահմանված կարգով սեփականաշնորհած սակավաբնակարան բնակելի տուն (քոթեջ) և հիմք ընդունելով «Է. Ապրեսյան» ՍՊԸ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, քաղաքացի Ն. Առաքելյանի դիմումը՝

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0012-0052 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0.0084հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Նվեր Հովիկի Առաքելյանի (ծնվ. 1976թ.) և Քոթեջային 2-րդ փողոցի 26/2 հասցեում գտնվող կից տնատիրության ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, իսկ հողամասում գտնվող 1989թ. կառուցված 83.12քմ մակերեսով բնակելի տան (քոթեջի) և 1996թ. կառուցված 19.12քմ մակերեսով ծածկարանի նկատմամբ ճանաչել Նվեր Հովիկի Առաքելյանի (ծնվ. 1976թ.) սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Անշարժ գույքի համար հաստատել հետևյալ փոստային հասցեն՝
գ. Գուգարք Քոթեջային 2-րդ փողոց 26/4 բնակելի տուն (քոթեջ)
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

03 09 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ No 140

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ 1 ՓՈՂՈՑԻ 1 ՇԵՆՔԻ 38 ԵՐԵՔ ՍԵՆՅԱԿԱՆՈՑ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԱԳՆԻՍԱ ԳՈՒՐԳԵՆԻ ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՈՐՈՎ ՆԱ ԽՆԴՐՈՒՄ Է ՎԵՐՈՀԻՇՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՃԵՎՈՎ ՕՏԱՐԵԼ ԻՐԵՆ.

Հիմք ընդունելով Գուգարքի ավագանու 24.08.2018թ. N 20 որոշումը՝

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

Համայնքի սեփականություն հանդիսացող (համաձայն 17.08.2018թ. տրված անշարժ գույքի համայնքային սեփականության իրավունքի N 17082018-06-0025 վկայականի) Գուգարքի 1 փողոցի 1 շենքի 38 երեք սենյականոց բնակարանը ուղղակի վաճառքի ձևով, 74470 (յոթանասունչորս հազար չորս հարյուր յոթանասուն) դրամ արժեքով օտարել վերոհիշյալ բնակարանի բնակչուհի Ագնիսա Գուրգենի Ավետիքյանին սեփականության իրավունքով և նրա հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել առուվաճառքի պայմանագիր:

Վճարումը N 02203 անդորրագրով՝ 36500 դրամ, կատարված է Գուգարքի գյուղապետարանի դրամարկղ, իսկ 37970 դրամը N 000244 անդորրագրով՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ-ի «Վեռնաձոր» մասնաճյուղում:

Գուգարքի համայնքապետ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 141
16.04.2018

ՍՈՑՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝

Գուգարքի ներբռնիչյալ բնակիչներին տալ դրամական օգնություն.

1. Հարությունյան Ռազմիկ – 30000դր.
2. Սաքանյան Վահան – 50000դր.
3. Թորոսյան Շահեն – 70000դր.
4. Անանյան Շահեն – 70000դր.

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի
Գուգարք համայնք
Հեռ. 5-24-76

03.09.2018.

ՈՐՈՇՈՒՄ N 142

06-031-0061-0036 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Աշուղյանի դիմումը, <<Մել և Միլ>> գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387Ն որոշումով՝

Համայնքապետը որոշեց.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0061-0036 ծածկագրի տակ գտնվող 0,0805հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1990թ. կառուցված 53,31 քմ մակերեսով բնակելի տան, 1990թ. կառուցված 7,71 քմ մակերեսով բաց պատշգամբի, 1990թ. կառուցված 23,76քմ մակերեսով անասնագոմի, նկատմամբ Արմեն Նորիկի Աշուղյանի սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0,0805 հա հատկացված հողամասն անհատույց, սեփականության իրավունքով վերահատկացնել Արմեն Նորիկի Աշուղյանին:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
5. Անշարժ գույքի փոստային հասցեն է՝ գ. Գուգարք 1-րդ փողոց, 1 փակուղի տուն 8:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

Համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 143
04.09.2018

ՀԱՆԳՈՒՅՑԱԼԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝

Հանգուցյալ Ռեմիկ Գարասիմի Հակոբյանի ընտանիքին տալ դրամական օգնություն՝ 50000 դրամ:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

04 09 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ No 144

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ (ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 13.10.2005Թ. N 1916 Ն ՈՐՈՇՄԱՆ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 36.03հա ՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԱՆՏՈՆ ԱԼԻԿԻ ՍԱՔԱՆՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հիմք ընդունելով Գուգարքի ավագանու 24.08.2018թ. N 17 որոշումը, ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի, Օգտակար հանածոների Արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության 22.06.2018թ. թիվ ԵՀԹ-29/272 թույլտվությունը՝

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

Գուգարք համայնքին սեփականության իրավունքով փոխանցված 36.03հա գյուղատնտեսական նշանակության հողը տարեկան 210000 (երկու հարյուր տասը հազար) դրամ վարձավճարի դիմաց, երեք տարի ժամկետով, երկրաբանական հետախուզման նպատակով վարձակալությամբ տրամադրել Անտոն Ալիկի Սաքանյանին և նրա հետ կնքել վարձակալության պայմանագիր:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

05 09 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ No 145

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0061-ԾԱԾԿԱԳՐԻՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱԶԳԵՆ ՄԻԽԱԵԼԻ ՇԵԿՅԱՆԻ (ԾՆՎ. 11.06.1957թ.), ՍԵՂԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԽԱՌԱՏՅԱՆԻ (ԾՆՎ. 16.07.1958թ.), ՎԱԼԵՐԻ ՎԱԶԳԵՆԻ ՇԵԿՅԱՆԻ (ԾՆՎ. 31.12.1981թ.) ԵՎ ԳԱՅԱՆԵ ՎԱԶԳԵՆԻ ՇԵԿՅԱՆԻ (ԾՆՎ. 30.10.1983թ.) ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հիմք ընդունելով Վ. Շեկյանի դիմումը, Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14[3] հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510 Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005 N 2387 Ն որոշումով, «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» 01.06.2010թ. N 186 Ն հրամանով՝

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Վերականգնել կադաստրային քարտեզի 06-031-0061- ծածկագրից 612քմ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը և հողամասը սեփականության իրավունքով վերահատկացնել Վազգեն, Վալերի, Գայանե Շեկյաններին և Սեղա Խառատյանին համատեղ սեփականության իրավունքով:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հողամասի սեփականաշնորհումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը:
3. Փոխել Գուգարքի 1 փողոց 39 հասցեում գտնվող 612քմ հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի:
4. Անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝
գ. Գուգարք 1 փողոց 39 հող
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

05 09 2018թ.

Որոշում N 146

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0061-0098 ԾԱԾԿԱԳՐԻՑ 28քմ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 53 հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշմամբ՝

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0061-0098 ծածկագրից (համաձայն հատակագծի) 28քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Գուգարք համայնքի սեփականության իրավունքը:

Միջնորդել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավարությանը կատարելու համապատասխան գրանցում:

2. Գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝
գ. Գուգարք 1 փողոց 3/41

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

05 09 2018թ.

Որոշում N 147

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0061-0098 ԾԱԾԿԱԳՐԻՑ 29.4քմ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 53 հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշմամբ՝

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0061-0098 ծածկագրից (համաձայն հատակագծի) 29.4քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Գուգարք համայնքի սեփականության իրավունքը:

Միջնորդել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավարությանը կատարելու համապատասխան գրանցում:

2. Գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝
գ. Գուգարք 1 փողոց 3/42

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ